

ՏԵՂԵԿԱՆՔ

Լոռու մարզի արդյունաբերության ոլորտի 2012թ. 1-ին եռամսյակի աշխատանքների մասին

2012 թվականի առաջին եռամսյակում մարզի արդյունաբերական ձեռնարկությունները ընթացիկ (գործող) գներով թողարկել են 14,104.88 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք 2011 թվականի 1-ին եռամսյակի 13,531.96 մլն դրամի դիմաց՝ աճի տեմպը կազմել է 104.2%, բացարձակ աճը՝ 572.93 մլն դրամ: 2012թ. հունվար-մարտ ամիսների ցուցանիշներով մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները ունեն այսպիսի տեսք՝

- մշակող արդյունաբերություն 11,742.16 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 101.3% և տեսակարար կշիռը՝ 83.2%,
- հանքարդյունահանումը համապատասխանաբար՝ 1,941.12 մլն դրամ, 125.1% և 13.8%,
- էլ.էներգիայի արտադրությունը՝ 421.61 մլն դրամ, 107.1% և 3.0%:

Ընթացիկ տարվա մարտ ամսին մարզի արդյունաբերական ձեռնարկություններն աստիճանաբար մտնում են իրենց նորմալ աշխատանքային հունի մեջ, իհարկե հաշվի առնելով միջազգային և ներքին շուկաների տենդենցները: Ինչպես և անցյալ տարի, այս տարի ևս մարզի էներգիա արտադրող ընկերությունները նվազեցրել են արտադրության ծավալները եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով՝ 2012թ. 1-ին եռամսյակում մարզում արտադրվել է 25,013.5 հազ. կվտ/ժամ էլ. էներգիա, որը կազմում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 83.2%-ը, բացարձակ թվերով նվազել է 5,053.52 հազ. կվտ/ժամ-ով:

2012թ. 1-ին եռամսյակում մարզի մշակող արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

					(հազ. դրամ)
	Ճյուղի անվանումը	2012թ. հունվար-մարտ	2011թ. հունվար-մարտ	աճը (%)	2012թ. 1-ին եռամսյ. տեսակ. կշիռը մշակող արդյունաբերության մեջ (%)
1.	Քիմիական արդյունաբերություն	123,404.0	226,320.0	54.5	1.1
2.	Թեթև արդյունաբերություն	193,687.0	186,194.0	104.0	1.6
3.	Մանրի արդյունաբերություն	456,571.0	537,817.0	84.9	3.9
4.	Մեքենաշինություն և սարքաշինություն	454,144.0	228,110.0	199.1	3.9
5.	Փայտամշակում և կահույքի արտադրութ.	8,091.0	5,983.0	135.2	0.1
6.	Մետալուրգիա	10,478,736.0	10,365,052.0	101.1	89.2
7.	Այլ ճյուղեր	27,528.0	37,946.0	72.5	0.2
Ընդամենը		11,742,161.0	11,587,422.0	101.3	100.0

2012 թվականի հունվար-մարտին մարզի 28 ձեռնարկություններ դեռևս արտադրանք չեն թողարկել (հունվարին՝ 49, հունվար-փետրվարին՝ 32 ձեռնարկություն): Դրանք հիմնականում այն ձեռնարկություններն են, որոնց աշխատանքը կապված է սեզոնային գործոնի հետ՝ ոչ մետաղական հանքերի շահագործում և քարամշակում:

1-ին եռամսյակի արդյունքներով մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեսակարար կշիռ ունեն Ալավերդու «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 74.29% (փետրվարին՝ 74.91%), «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 8.68% (փետրվարին՝ 10.30%), «Սագամար» ՓԲԸ-ն՝ 5.05% (փետրվարին՝ 3.37%), «Ավտոգեն-Ս» ՍՊԸ-ն՝ 2.49% (փետրվարին՝ 1.55%), «Չորագետ-հիդրո» ՍՊԸ-ն՝ 1.39% (փետրվարին՝ 1.44%), «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 1.23% (փետրվարին՝ 1.07%):

Ըստ տարածաշրջանների 2012 թվականի հունվար-մարտ ամիսներին թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ (գործող) գներով ունի այսպիսի տեսք.

(հազ. դրամ)

Տարածաշրջանի անվանումը	2012թ. հունվար-մարտ	2011թ. հունվար-մարտ	Աճը		Տեսակարար կշիռը (%)
			Բացարձակ	(%)	
Սպիտակ	244,008.0	272,818.0	-28,810.0	89.4	1.73
Տաշիր	81,173.0	72,185.0	8,988.0	112.5	0.58

Գուզարք	252,460.0	188,367.0	64,093.0	134.0	1.79
Ստեփանավան	841,557.0	91,860.0	749,697.0	916.1	5.97
Թումանյան	11,767,011.0	11,953,408.0	-186,397.0	98.4	83.43
Վանաձոր	918,675.0	853,319.0	-34,644.0	96.4	6.51
Ընդամենը	14,104,884.0	13,531,957.0	572,927.0	104.2	100.00

Ինչպես երևում է վերը բերված երկու աղյուսակներից զգալի փոփոխություններ են տեղի ունեցել ըստ տարածաշրջանների մարզի արդյունաբերության արտադրանքի կառուցվածքում՝ ի շնորհիվ «Սագամար» ՓԲԸ-ի գործունեության կտրուկ աճել է Ստեփանավանի տարածաշրջանի տեսակարար կշիռը:

Ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին մարզի արդյունաբերության ոլորտում աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 4481 մարդ, որը 17.1%-ով կամ 655 մարդով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Նման դրական ցուցանիշն արդյունք է հիմնականում «Սագամար» ՍՊԸ-ի գործունեության, նաև Վանաձորի թեթև արդյունաբերության ձեռնարկությունների արտադրության ծավալների ավելացման:

2012 թվականի առաջին 1-ին եռամսյակում մարզի արդյունաբերության ցուցանիշները բնեղեն արտահայտությամբ ըստ 19 հիմնական արտադրատեսակների հետևյալն են՝

	Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	2012թ. հունվար-մարտ	2011թ. հունվար-մարտ	Բացար-ձակ աճը
1.	Էլեկտրաէներգիա	մլն. կվտ.ժամ	26.8	30.9	-4.1
2.	Էլեկտրաշարժիչներ	հատ	1260	1000	260
3.	Ավտոգենային սարքավորումներ	հազ. հատ	26.0	18.0	8.0
4.	Տրակտորներ	հատ	3	0	3
5.	Պղինձ՝ պղնձի խտանյություն	տոննա	428.8	478.0	-49.2
6.	Պղինձ կոնվերտորային	տոննա	2425.2	2070.0	355.2
7.	Պղնձի խտանյութ	տոննա	1969.4	2207.0	-237.6
8.	Սինթետիկ կորունդ	կգ.	1536.9	2853.7	-1316.8
9.	Լաքաներկանյութեր	տոննա	0.5	0.9	-0.4
10.	Լվացող, մաքրող և օսլայող միջոցներ	տոննա	157.0	138.1	18.9
11.	Շինափայտ	տոննա	49.3	0.0	49.3
12.	Ե/բետոնյան իրեր և կոնստրուկցիաներ	տոննա	241.9	112.0	129.9
13.	Ոչ հանքային շինանյութեր	տոննա	700.0	12859.0	-12159.0
14.	Ալյումինե մետաղապլաստ դռներ, պատուհան.	հատ	28	126	-98
15.	Կուրտկաներ, տաբատներ, կոմբինիզոններ	հազ. հատ	32.3	47.6	-15.3
16.	Պանիր	տոննա	49.7	41.5	8.2
17.	Հաց	տոննա	497.2	475.0	22.2
18.	Հրուշակեղեն	տոննա	16.0	17.7	-1.7
19.	Մակարոնեղեն	տոննա	9.8	290.7	-280.9

Չնայած բնեղեն արտահայտությամբ մարզի արդյունաբերական հիմնական արտադրատեսակների մեծ մասի ծավալների աճի, 2012թ. 1-ին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ 2.01%-ով նվազել է արտահանման ծավալները, որը պայմանավորված է միջազգային շուկաներում գների աճի տեմպերի նվազմամբ, ինչպես նաև տարադրամի գների անկայունությամբ:

